

Բոլենց յիշատակարաններու այս դպրոցին հետեւող մը՝ գոնէ ինծի ծանօթ՝ Յոհան քահանան է, որ 1638ին Աւետարան մը գրած է Խաչատուր քահանայի և Վարդան արեւդայի համար Սուրբ Գրքի և Սր. Յովաննու Մկրտչի հովանիին տակ։ Յոհան գրչէն ունինք ուրիշ Աւետարան մըն ալ Սարգիսի համար գրուած 1648ին՝ Սոկոսի երեք խորանաց եկեղեցւոյն հովանւոյն տակ։

Սակայն ինչ որ մասնաւորաբար մեզ կը հետաքրքրէ հոս՝ այն է որ 1638ի Աւետարանին յիշատակարանը գրուած է Բոլենց յանգաւորեալ յիշատակարաններուն երրորդ մասին այնքան նման, թէեւ Բոլենց դպրոցէն դուրս։

Հոս կու տամ Յոհան քահանայի 1638ի յիշատակարանին յանգաւորեալ մասը.

Փառք....

Ձայս մեծ գանձս աստուածային Տեսեալ՝ Խաչատուր քահանայն՝ Եւ Վարդան արեւդայն՝ Բազում ջանիւք յաւարտ հանին. Եդին ի դուռն սուրբ Յովաննու Եւ սուրբ Գեորգեան։

Ձոր անջինջ մընա
Յայսմ հեռէ մինչ յաւիտեան.
Որք ընթեռնուն կամ տեսնեն
Բոլոր սրբաւ զողորմին տան,
Ձէկ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք ըզմեզ արժան.
Դուք յիշեալ լինէք յԱստուծոյ,
Լըսել ըզմայն երանութեան։ -
Եւ Աստուծոյ մարգարէին,
Փառք և պատիւ միշտ յաւիտեան։

Գրեցեալ աւետարանս,
ՈՁէ (1638) էր թուական.
Ի գեաւդս՝ որ Սուրբ կոչի,
Ի դուռն սուրբ Գեորգեան զաւարժարին
Եւ սուրբ Յովաննու Մկրտչին.
Կաթողիկոս Աղթամարայ
Տէր Սահակոսն էր սրբազան.
Վարուք սուրբ առաքելի
Անուանակից իւրոյ նըման,
Սուրբ Սահակոսն առաջին,
Որ Քրիստոսի վասն քարկոծեցաւ։

Հայցեմք յապենիադ Տեսնէ՝

Անփորձ մընա և անասան,
Շըքեղ փառաւք նա զարդարի
Ընդ վարդապետս երկոտասան,
Ձգովանքն առնու ի Քրիստոսէ,
Թէ եկ հովիւ քըրանաջան։

Ձաւետարանըս գրեցի
Յոհան՝ մեղաւք ի մէջ մարդկան.
Ձանունս ունիմ քահանայի,
Գործովս անարգ և անպիտան.
Ձեւս ունիմ քահանայի,
Գործովս լըցեալ աղաղակութեան.
Ձէկ աղաչեմք, սուրբ քահանայք.
Յիշման առնէք զիս արժան,
Ըզարագըրող սուրբ գըրոցս,
Որ կոչի յիշատակարան⁽³⁴⁾։

* * *

Այս յանգաւորեալ յիշատակարանները գրական-գեղարուեստական արժէք մը չեն ներկայացներ։ Գրեթէ միօրինակ յանկերգ մըն են, բացի անկէ որ գրչին, տեղւոյն, ծաղկողին թուականին, ստացողին մասին, կենսական ծանօթութիւններ կու տան։ Ասկէ զատ կարեւորագոյն մասը բնական է իմ երկրորդ մաս կոչածս է, որ ուրիշ բան չէ բայց եթէ խրատագիր մը ձեռագիր ծաղկողներուն, անոնց ուշադրութեան յանձնելով տէրունական նիւթեր՝ որոնք կարելի է մանրանկարել, նոյն իսկ Աւետարաններու այն սկզբնատողերը, որոնք պէտք է մեծ զարդագիր ընել։

Սուր հեղինակը, ինչպէս ըսի, ըստ իս Ներսէս քահանայ Բոլենց է։ Ասիկա ինծի ենթադրել կու տայ որ ան այս յանգաւոր խրատագրով իր ծաղկող աշակերտներուն յիշողութիւնը կը թարմացնէր իրենց նկարելիք մանրանկարներուն նիւթին, կամ անոնց առաջնորդ կ'ըլլար ապագայի մանրանկարչական գործերուն համար։

(Վերջ)

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

⁽³⁴⁾ Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրա-կանի, էջ 893-894.

ԱՊԵՏԻՔ ԿՈՄՍԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տիւս «Բազմ.» թիւ 1-2, էջ 18)

Գ. Լ. ՈՒԽ Դ.

ԱՊԵՏԻՔԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒ-ԹԻՒՆԸ ԿԱՆԵՐՈՂ ԴԵՊԲԵՐԸ

Պետրոս Ապետիքի պարսկական առաջին առաքելութիւնը ծանօթացնելէն առաջ, - որպէսզի անոր դժուարութիւնները և կարեւորութիւնը աւելի լաւ կարենանք հասկընալ, - քանի մը խօսք նուիրենք իրեն նալ, - քանի մը խօսք նուիրենք իրեն ժամանակակից պարսիկ - եւրոպական յարաբերութիւններու մասին։

Երբ գերման - հոմէական կայսրութիւնը վերջնական կերպով ուզեց իր հաշիւը մաքրել միշտ աւելի սպառնացող թրքական իշխանութեան հետ, բնականաբար պիտի դիմէր անոր ամէնէն ոխերիմ թշնամիին՝ Պարսկաստանի, որպէսզի միացեալ ուժերով վերջնականապէս ջախջախէին մահիկին զօրութիւնը։ Արդէն Պարսկաստանի համար ալ վտանգաւոր կը դառնար Ստամպուլի կայսրութիւնը։ Դեսպանական վաւերական յայտարարութիւններէ կրնանք ցուցնել թէ անկարելիութեան սահմաններուն մէջ չէր գտնուէր Օսմանեան տէրութեան վրայ միաժամանակ երկու կողմէ յարձակելու ծրագիրը. մանաւանդ թէ գրական քաղաքականութեան կարելիութիւնը կը կրէր այդ համաձայնութիւնը, զոր մենք այսօր որոշ կերպով կրնանք հաստատել։

Ապետիքի առաքելութեան նպատակն էր համոզել Շահը Գերմանիոյ կայսեր հետ միասին սկսելու պատերազմը Թուրքերու դէմ։

Ինքը չէր առաջինը որ կը ջանար շահի Շահը ի նպատակ քրիստոնէութեան դատին։ Արդէն քանի մը սերունդներ առաջ Ռոտով թագաւոր-կայսրն ալ հունգարացի մը զըր-կած էր Պարսկաստան, Թրանսիլուանիացի Ստեփան Քաթալը, պատասխանելու համար Շահին «Պաշտպանողական ու յարձակողական» համաձայնութեան կոչին։ Ստեփան սակայն չհասաւ մինչեւ Շահին արքունիքը, ան մեռաւ ճամբորդութեան տաժանքէն, ինչպէս աւելի վերջ՝ Շիւշ լեհ դեսպանը։ Երբեմնի հունգարացի դեսպանի աճիւնները մինչեւ այսօր ալ կը հանգչին կասպից ծովու մօտ՝ Լահիճանի բուրաստաններու մէջ⁽¹⁾։

Վենետիկեան Հասարակապետութիւնը ժեզարէն արդէն դիւանագիտական և վաճառականական սերտ յարաբերութիւններ կը մշակէր Պարսկաստանի հետ, մանաւանդ թէ Եւրոպայի այս բարեկամական կապեր ունէր Եւրոպայի այս համակիր տէրութեան հետ. և Ապետիքի ուղեւորութենէն քանի մը տասնեակ տարիներ առաջ անկէ զինուորական օգնութիւն խնդրած էր։

Ժամանակին շահը, Աբաս Բ, որ օրինակն էր արեւելցի իմաստուն, արդար ու բարեբարոյ իշխաններու, մեծ բարեկամութիւն ունէր Ս. Մարկոսի Հասարակապետութեան հետ։ Վենետիկի ու Պարսկաստանի բարեկամական փոխ-յարաբերութիւնները ոչ միայն վաճառականութեան հողին վրայ ալ շատ նաեւ դիւանագիտական հողին վրայ ալ շատ օգուտներ ունէին։ Պարսկական գահակալ ընտանիքը միշտ աւելի բարեացակամ կը դէպ շնորհիւ Վենետիկի բարերար ազդեցութեան, ու մինչ իր դրացի երկիրներուն մէջ ստէպ ջարդեր տեղի կ'ունենային՝ հոն գրեթէ անվրդով կ'ապրէին անոնք։ Աբաս Բ. շատ

⁽¹⁾ Անոր բարատեղարին, Գեորգ Թեքէֆանտերի 1690-ին երեւցած գործը. «Iter Persicum» վերնագրով, հրատարակուած Աւթենպուրկի մէջ, - Կամ. Ծ. Դեքեր

Գաղղիացի գիտնականին երկասիրութիւնը. Bibliothèque Orientale Elzévirienne X հտ. (XII. էջ 1-120).

կը գերազանցէր իր ժամանակի մտայնութիւնն և ոգին երբ կ'ըսէր. « Խղճի գաղաւթը ես չեմ, այլ Աստուած: Երբեք պիտի չուզեմ այնպիսի գործերու մէջ խառնուիլ որ Արարչին ու արեգեքի Տիրոջ գահուն առջեւ պիտի ելլեն ⁽²⁾ »:

Ծերակոյտին ուղղուած նամակը, — դեղնած, մարգարտի նման գեղեցիկ գերբրով գրուած ⁽³⁾ — դեռ աւելի համակրելի կը ցուցնէ մեզի այս խնամտուն ու մեծանձն թագաւորը, որ սիրի ըլլալով հանգերձ գիտցաւ բարեկամ մնալ քրիստոնեաներուն, և որուն իշխանութեան ժամանակ բարօրութիւն ու խաղաղութիւն կը տիրէր երկրին մէջ:

Արդէն 1600-ին վենետիկ կու գայ Էֆէթ Բէկը՝ Շահ Աբաս Ա-ի նամակով: Բաւերու ձոխութեամբ ինչ այս նամակով կը վստահացնէ Հասարակապետութիւնը իր անշահախնդիր զգացումներու մասին: Նամակին հետ ընծաներն ալ կը վկայեն շահին զգացումները Աղրիականի Հասարակապետութեան հանդէպ: Տոժը ընդունեցաւ ու կրով բանուած մեծագին վերարկու մը, իսկ Ս. Մարկոսի եկեղեցին ձոյլ ոսկիէ Աստուածածնի ու Յիսուսի արձան մը և մետաքսէ գորգ մը:

Պարսկական համաձայնութիւնը զօրաւոր գէնք մ'էր թուրքերու դէմ, ու բնականաբար վենետիկ կ'ուզէր օգտագործել զայն. մանաւանդ որ Աբաս Բ՝ իր նախորդէն ալ աւելի շահագրգռութեամբ կը դառնար դէպի վենետիկեան Հասարակապետութիւնը: Կրէտէի վիճակը օրէ օր կը ծանրանար օսման հետ սպառնալիքներուն պատճառով. մինչ վենետիկի համար ամենեւին անտարբեր չէր այս կղզիին կացութիւնը: Ուստի ծերակոյտին առաջին գործը եղաւ սովորականէն

աւելի հարուստ ընծաներ զրկել շահին, աւելի սիրաւ աւելի գրաւելու համար: Շահը փոխադարձեց ընծաներուն մեծագին աւելուքներով, արեւելեան յարգի մետաքսներով ու ձոխ բանուածքներով: Ասոր վրայ Ծերակոյտը վենետիկի Լէհ դեսպանին, Հերոնիմոս Թիէփոլոյի յանձնեց Լեհաստանի թագաւորին թելագրել որ ինքն ալ դեսպանութիւն մը շրջէ Պարսկաստան՝ համոզելու համար Շահը պատերազմ սկսելու Քրիստոնէութեան ի նպատակ: Պատկերաւ թաքնաւոր իշխանն ալ զրկեցին դեսպան մը՝ յանձնին Դոմինիկոս Սանդիին. ասոնք նամակներ կը զրկէին Շահին՝ ցուցնելու համար թէ Թուրքիոյ զօրանալը վտանգաւոր էր նաեւ Պարսկաստանի համար ալ:

Լէհ թագաւորը կատարեց Հասարակապետութեան փափաքը ու Լէհ-վենետիկեան դեսպանութիւնը 1646 Հոկ. 2-ին ճամբայ կ'ընէր վարչաւիայէն դէպի Պարսկաստան 25 լեհ ազնուականներէ բաղկացած: Ճամբան Մոսկուայի վրայէն դէպի Նիժնի-Նովկորոտ կը տանէր, անկից Քազան, ուր դեսպանները հասան 4 ամիս վերջ, այսինքն Փետր. 2-ին: Երեք ամիս վերջ նաեւ առին վրկայի վրայէն դէպի հարաւ իջնելով մինչեւ գետաբերանին քով գտնուող Աստրախան: Փոթորկալից Կասպից ծովուն վրայ ալ ամիս մը տեւեց նաւարկութիւնը՝ մինչեւ պարսկական ամիր հասնելու համար: Հոս տառապանքներէն ու յոգնութենէն մեռաւ Լէհ դեսպանը. գործը շատ ստիպողական ըլլալուն դեսպանները ստիպուեցան ուսական սաստիկ ձմրան նեղութիւնները կրել, որ առաջ Շահին հասնելու յոյսով:

վենետիկի դեսպանը Հոկտեմ. 27-ին ունկնդրութիւն ունեցաւ, իր մեկնումէն ճիշտ տարի մը վերջ: Ունկնդրութիւնը մեծ

di Stato di Venezia: Ասոնց մասին հրատարակութիւն մը դեռ եղած չէ. այնչափ միայն գիտենք թէ 1878-ին այս հետաքրքրական ու օտար նամակագրութեան վրայ աշխատած է Մոհամէտ Հասան Խան Սանի'աովէն, Նասր-է-Տին Շահի թարգման ընտրուողը:

⁽²⁾ Sir John Malcolm Պոմպէի տեղակալը, The history of Persia. (Նոյնը գերմ. թարգմ. Geschichte Persiens von der frühesten Periode an bis zur jetzigen Zeit, 42 73-76).

⁽³⁾ Բնագիրները վենետիկի դիւանին մէջ, Archivio

պատիւով եղաւ, որու ժամանակ դեսպանը բացատրեց իր գաղաւթին պատճառը: Շահը մեծ սիրով մտիկ ըրաւ ու պատասխանեց, բայց — ինչպէս արդէն կարելի էր նախատեսել — խոստացաւ անմիջապէս Թուրքիոյ դէմ պատերազմ սկսել. որովհետեւ մինչ դեսպանները կը հասնէին՝ պարսկական սահմաններու վրայ խռովութիւններ ծագեցին, ու բանակը զբաղած էր ասպատակողները զսպելու, բայց միւս կողմէ խոստացաւ որ հազիւ թէ կարելի ըլլայ՝ պիտի չզլանայ իր ազդեցիկ օգնութիւնը:

Դեսպանը շուտով վենետիկ դարձաւ ու երկար տեղեկատուութեամբ մը հաշիւ տուաւ իր ճամբարգութեան մասին: Տեղեկատուութեան ամենահետաքրքրական մասն է թէ դեսպանը ամենեւին չի տարակուսիր Շահի անկեղծութեան մասին, ու համոզուած է բոլորովին թէ ան այդ պարագաներու տակ անկարելիութեան մէջ կը գտնուի օգնութիւն հասցնելու, եթէ յանկարծական յաջողութիւն մը չփոխէ դրութիւնը: Մինչ Ծեղողութիւն մը չփոխէ դրութիւնը՝ դեսպանութիւնը կը մտածէր նոր դեսպանութիւն կերպով մը զրկել՝ ահա հոնկէ անակնկալ կերպով դեսպանութիւն մը կը հասնի՝ աւետելով թէ Շահը պատրաստ է այլեւս օգնելու: Դրեք րախտաբար Շահը ուշ հասաւ իր առաջարկով, որովհետեւ Կրեաէ արդէն ինկած էր:

Նոյնպէս գիտնալու է թէ Շահը կրկնեց խոստումը՝ զոր արդէն իր նախորդը Ռոտուֆին խոստացեր էր, թէ առաջին պատեհ առթիւն հաշիւը պիտի կարգադրէ Թուրքիոյ հետ:

Ասոնք էին ուրեմն այն պարագաները՝ որոնց վրայ հիմնուած՝ Ապետիք կրնար մեկնել դէպի Պարսկաստան քանի մը տարիներ վերջ, որպէսզի Հոնգարիան ազատելու համար ուժեղ ու վճռական համաձայնութիւն մը գոյացնէ:

* * *

Հոսմի աստուածաբանութեան ընթացքը աւարտելէ վերջ՝ Ապետիքի մէջ միշտ աւելի

կը զօրանար գործելու փափաքը: Կ'ուզէր օր առաջ Արեւելք մեկնիլ:

Երիտասարդը շարունակ դիմումներ կը կատարէր դիւանագիտական մարմնի մը քով ծառայելու համար՝ Հաւատոյ Ծաւալման Ժողովի Ծիրանաւորին, որուն կը պատկանէր այս գործի համար յարմար մարդ գտնելը: Ինքն ալ կ'ուզէր աշխատիլ եւրոպական Քրիստոնէութեան և Արեւելքի հաւատաւորներուն նպատակով, շահելով պարսիկ ինքնակալը Քրիստոնէութեան դատին համար: Իր գաղաւթներէն զինքը կը համարէին ամենէն կարողը, թէպէտեւ անոնցմէ ալ ելած են նշանաւոր գէմքեր: Այս համառոտ շնորհիւ է, անշուշտ, որ Ծիրանաւորը բոլոր շնորհներէն Վատթէոսի, Նաշիրուանի զինքը ընտրեց Մատթէոսի, Նաշիրուանի որ Կղկմէս Թ-ի կողմէն կը զրկուէր Սուլիման Շահին: Սա ալ նոյնպէս արեւելցի ծագում ունէր: Մատթէոս ծերունի ու հիւանդոտ բայց հոգեկան բարձր գաղափարականներ յղացող Պապի կողմէն Շահին կը տանէր նամակ մը:

Դեսպանութեան նպատակն էր Ս. Աթոռի և Իսպահանի արքունիքի միջեւ եղած յարեբութիւնները վառ պաշել, մանաւանդ թէ աւելի եւս արծարծել, և շահիլ զայն Եւրոպական Համաձայնութեան համար իրր զինակից:

Թէ ինչո՞ւ եկեղեցական մը՝ Մատթէոս քահանան, ընտրած էր Պապը, բայց այն բնական պատճառէն որ Ս. Աթոռի գիւղական պատճառէն անոնցմէ կազմուած նախնական մարմինը անոնցմէ կազմուած էր՝ կ'որ նաեւ այն պատճառը որ Պապը կը հետապնդէր կրօնական նպատակներ ալ, որոնք բնականաբար պիտի ունենային իրենց ազդեցութիւնը համաձայնութեան վրայ: Միւս կողմէն հարկաւոր էր երիտասարդ, ազնուական պարսկահայ Ապետիքին մասնակցութիւնը, քանի որ ան Հոսմի ծրագիրներու ծանօթ էր և կրնար Շահին պէտք եղածին պէս ներկայացնել բոլոր հարցերը: Մատթէոս երբեք Պարսկաստան չէր գացած, պարսկերէնի ալ ծանօթ չէր, ու ճամբայ



